

ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ



Լրացավ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ավետիսյանի ծննդյան 60-ամյակը: Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողությունը ջերմորեն շնորհավորում են նրան և իրենց բարեմաղթանքներն են հղում նախ և առաջ որպես համալսարանականի, որը 1979 թ. ընդունվել և 1983 թ. ավարտել է ԵՊՀ հիմնադիր պատմության ֆակուլտետը, իսկ ապա սովորել ՀԽՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1989 թ. պաշտպանել է թեկնածուական,

2002 թ.-ին՝ դոկտորական ատենախոսություն:

1985 թվականից պաշտոնավարել էք Երևանի պետական համալսարանում: 1995-2003 թթ. եղել էք ԵՊՀ գիտ. բարտուղար, 2004-2009 թթ. Պատմության ֆակուլտետի դեկան, իսկ 2009 թ. մինչ օրս Երևանի պետական համալսարանի Հնագիտության և ազգագրության ամբիոնի վարիչն էք:

Դեռևս ուսանողական տարիներից ընտրել էք Ձեր մասնագիտությունն ու որոշել անմնացորդ նվիրվել հին Հայաստանի հնագիտական մշակութային ժառանգության ուսումնասիրության բարդ ու միաժամանակ չափազանց հետաքրքիր, պատասխանատու գործին: Ձեր նախասիրության լավագույն արտահայտությունը մասնակցությունն է Թալինի, Օշականի, Արենիի, Արագածի, Արամուսի, Այգեշատի և այլ վայրերի հնագիտական պեղումներին: Դրանք իրականացնելով՝ Դուք ապրում էք հազարամյակների ընթացքում հողի ընդերքում թաքնված և Ձեր ջանքերով կրկին լույս աշխարհի հանված հին մասուկների առաջացրած բերկրանքով: Ձեր սիրո ու նվիրումի հաջորդ փուլը դարձավ 2003 թվականից Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, ԵՊՀ-ի և Ինսբրուկի, Կալիֆորնիայի համալսարանների ու այլ կրթօջախների մասնակցությամբ հնագիտական արշավախմբի ղեկավարումը, որը պեղումներ իրականացրեց Կոտայքում, Արագածոտնում, Վայոց Ձորում և այլուր:

Որպես փորձագետ, մասնակցել էք բազմաթիվ հետազոտական ծրագրերի, կազմել էք հնագիտական հուշարձանների ուսումնասիրության հայեցակարգն ու գործառնական մեխանիզմները, շարունակում էք ղեկավարել պատմահնագիտական մի շարք թեմաներ:

Ձեր խոր գիտելիքները, վերլուծական ունակությունները, գիտահետազոտական անվիճելի կարողությունները ապահովել են գիտական հետաքրքրությունների լայն շրջանակ: Դրանք ընդգրկում են հին Հայաստանի բրոնզի ու երկաթի դարերի և Վանի թագավորության հնագիտությունը, ավանդական ու նոր աշխարհընկալումը և այլ ոլորտներ:

Ձեր գիտական գործունեության ու հետաքրքրությունների հստակեցման կարևոր փուլը դարձավ Ձեր ղեկավարած միջազգային արշավախմբերի կողմից Արամուսի

պեղումները, որոնցով Ձեր ավանդը բերեցիք հայոց հնագույն շրջանի հնագիտական ուսումնասիրության գործին: Այդ պեղումների արդյունքները հնարավորություն են տալիս նորովի մենաբանել նշանավոր բնակավայրի վերաբերյալ բազմաթիվ հարցեր:

Մեծարգո՝ հոբելյար, Դուք հեղինակ և համահեղինակ եք մի քանի մենագրությունների և շուրջ հարյուրի հասնող հոդվածների ու հրապարակումների, որոնք լույս են տեսել Հայաստանում և արտասահմանում:

Հնագիտության և մշակութաբանության ոլորտում մեծ ներդրում են Ձեր գրչին պատկանող Արարատյան դաշտի բիայնական խեցեղենի տիպաբանությունը, Արագածի ուրարտական ամրոցի, Արամուսի պեղումների արդյունքները, Հայաստանի և Առաջավոր Ասիայի Զ.ա. առաջին հազարամյակի կեսի մշակույթին նվիրված հրապարակումները և այլն:

1985թ. Դուք դասախոսական աշխատանքի անցաք Մայր բուհի պատմության ֆակուլտետում, սկզբում որպես ասիստենտ, դոցենտ, ապա պրոֆեսոր և լաբորատորիայի վարիչ՝ դառնալով ուսումնագիտական ու մանկավարժական գործընթացների գործուն և նախաձեռնող մասնակից: Ձեր դասախոսական աշխատանքը կրթության գործի անխոնջ սպասավորի ճանապարհ է, մեծ սիրո ու նվիրումի փայլուն օրինակ: Դասախոսություններում լավագույնս մեկտեղված են մատուցվող նյութի գիտական բարձր մակարդակն ու մատչելիությունը: Պատմության ֆակուլտետի կոլեկտիվը բարձր է գնահատում Ձեր վաստակը համալսարանական պատմաբան շրջանավարտների պատրաստման գործում: Նրանցից շատերը աշխատում են հանրապետության ժողովրդական տնտեսության, գիտության ու մշակույթի տարբեր բնագավառներում:

Դուք մի շարք գիտական խորհուրդների և գիտական հանդեսների խմբագրության խորհրդի անդամ եք, բազմիցս հայ հնագիտական, մշակութային հարուստ ժառանգությունը ներկայացրել եք հանրապետական և միջազգային (Գերմանիա, Իտալիա, Իսպանիա և այլն) գիտաժողովներում:

Պատահական չէ, որ Ձեր գիտական ու մանկավարժական վաստակը բարձր է գնահատվել ինչպես Մայր բուհի, այնպես էլ հանրապետական ղեկավարության կողմից, ինչի վկայությունն են Ձեզ շնորհված մեդալները, պատվոգրերն ու շնորհակալագրերը:

Այսօր էլ Դուք մեծ սիրով ջանասիրությամբ, եռանդով, նվիրումով ու ոգևորությամբ շարունակում եք Ձեր գիտամանկավարժական գործունեությունը՝ դասավանդելով, կրթելով ու պատրաստելով ուսանողների նոր սերունդներ և դրանով Ձեր արժանի ներդրումը կատարում երիտասարդ սերնդի դաստիարակման ու արժանի հերթափոխի պատրաստման անչափ կարևոր գործում: Դուք Ձեր Էությանբ բարի եք, երիտասարդության նկատմամբ հոգատար և խրախուսող, որի շնորհիվ ամենուրեք վայելում եք Ձեր գործընկերների և ուսանողության սերն ու հարգանքը:

Թույլ տվեք մեկ անգամ ևս շնորհավորել Ձեզ նշանավոր հոբելյանի առթիվ, մաղթել երկարակեցություն, առողջություն, ընտանեկան երջանկություն ու Ձեր սիրելի հնագիտության և մշակութաբանության ուսումնասիրությամբ զբաղվելու անսպառ եռանդ:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի ղեկան,
պ.գ.դ., պրոֆ.

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ